DOI: 10.54503/1829-4324.2023.1-69

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Էլյանորա Նորայրի Մաթևոսյան
Մարո Հայկազի Դեթլոֆֆ

Հոդվածը ստացվել է՝ 10.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Կոռուպցիան աշխարհի երկրների զարգացման և առաջընթացի լրջագույն խնդիրներից մեկն է, որը բացասական ազդեցություն ունի հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն: Կոռուպցիոն հանցագործությունները և կոռումպացվածությունը էական վնաս են հասցնում տնտեսությանը, պետական ապարատի նորմալ գործունեությանը, պետական իշխանության հեղինակությանը, պայմաններ են ստեղծում այլ հանցագործությունների համար, խախտում են սոցիալական արդարությունը: Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ են նվիրված կոռուպցիայի խնդիրներին, ընդունվել են միջազգային պայմանագրեր՝ ուղղված հակակոռուպցիոն օրենսդրության մշակմանը, մշակվել են հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր և ռազմավարություն: Այս համատեքստում էլ հատկապես կարևորվում է ՀՀ-ում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց կարգավորման հիմքերի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակը և խնդիրն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և ռազմավարությունները, դրանց կարգավորման օրենսդրական հիմքերը և առաջարկել հակակոռուպցիոն պայքարի այլընտրանքային մոտեցումներ:

Գրականության վերլուծություն: Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիայի տնտեսագիտական տեսությունների տարբեր կողմնակիցներ տալիս են դրա առաջացման իրենց վարկածները:[1] Օրինակ, պրոֆեսոր Ջ. Շեքլթոնը կոռուպցիան համարում է ոչ թե պատահական գործողություն, երբ բարոյապես անկայուն պետական պաշտոնյաները ենթարկվում են հարստացման գայթակղությանը, այլ առաջարկում է հաշվի առնել տնտեսական և սոցիալական հանգամանքները, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում կոռուպցիոն գործարքի համար:[2]

---

[1] Andvig J. The economics of corruption: A survey // Studi economici. 1991. Vol. 46. N 43. P. 57-94; Cadot O. Corruption as gamble // Journal of public economics. 1987. N 3. P. 223 - 244; Leff N. Economic development through bureaucratic corruption // American behavioural scientist. 1964. N 2. P. 8-14; Sah R. Persistence and pervasiveness of corruption / The World Bank (Conf. on political economy: theory and policy implications, 17-19 June 1987). Wash., 1987

[2] Shackleton J. Corruption: An essay in economic analysis // Political quart. 1978. Vol. 49. N 1. P. 34.

Կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է, որն ունի մի շարք դրսևորումներ, որոնցից են կաշառակերությունը (կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը), պաշտոնական դիրքի, լիազորությունների կամ կապերի չարաշահումը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը և հովանավորչությունը:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:[1]

Ակադեմիական շրջանակներում հաճախ բարձրաձայնվում են կոռուպցիայի հետ առնչվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տնտեսական կորուստները, աղքատության ու անհավասարության խորացումը, հանրային (պետական) հատվածի գործառութային անարդյունավետությունը, անպատժելիության մթնոլորտը և ընտրովի արդարադատության իրականացումը, մարդու իրավունքների ոտնահարումը, ժողովրդավարական այլ ինստիտուտների արդյունավետ գործարկման խոչընդոտները և այլն:

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, համեմատական, որակական և քանակական վերլուծության մեթոդներ:

Վերլուծություն: Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու գլխավոր գրավականներից է արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը, բարեվարքության ամրապնդումը, կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովումը: Կոռուպցիայի կանխարգելման, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առանցքային նշանակություն ունի օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը, կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացումը[2]: Բացի այդ, ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործողությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջինիս օժտել կոռուպցիայի դեմ պայքարի հաջողելու համար անհրաժեշտ գործիքակազմ:

Խորացող ճգնաժամը և ժամանակի ընթացքում ավելի լայն ոլորտներ ընդգրկող կոռուպցիան ստիպեցին պետություններին ճանաչել այն որպես անհապաղ լուծում պահանջող առաջնային հիմնախնդիր, որով սկսեցին ուրվագծվել հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ոլորտները: Դրանք ներառում էին աշխատակազմի ընտրության արդյունավետ քաղաքականության իրագործումը, պետական ծառայողների հասարակական և իրավական պաշտպանվածության պետական երաշխիքների ապահովումը, բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների պարտադիր հայտարարագրումը, պետական գնումների վերաբերյալ կանոնների, բիզնեսի արտոնագրման գործընթացների և բիզնեսների պետական գրանցման ընթացակարգերի պատշաճ կատարումը, ստվերային

[1] Ի՞նչ է կոռուպցիան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, https://www.transparency.am/hy/what-is-corruption

[2] https://www.e-draft.am/en/projects/129/justification

տնտեսության և երկրի տնտեսության ընդհանուր քրեականացման դեմ պայքարը:

Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում ավելի մեծ եռանդով մեկնարկել է 2000-ականներից սկսած, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից 2003թ. մշակված և ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրով, որն ընդունվել է ՀՀ կառավարության նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ:[1] 2003-2022թթ. Ընթացքում մշակվել է հակակոռուպցիոն միջոցառումների չորս ծրագիր (2003-2007թթ, 2009-2012թթ, 2015-2018թթ, 2019-2022թթ):

Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի առաջին ռազմավարությունը և դրա իրականացման 2003-2007թթ. միջոցառումների ծրագիրն ուղված էին կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների օրենսդրական դաշտի կատարելագործմանը՝ հատկապես մեծ կարևորություն տալով կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությանը և հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի դերին: Այդ միջոցառումների շրջանակներում հաստատվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաներն ու համաձայնագրերը, երկիրը սկսել է անդամակցել կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ միջազգային ամենահեղինակավոր կազմակերպություններին և միաժամանակ կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ընդունվել ավելի քան հիսուն օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոշումներ և այլ միջոցառումներ:

Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային առաջադեմ իրավական քաղաքակրթությունը մշակել է միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք սահմանում են կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի միասնական կանոններ: Հայաստանի Հանրապետությունը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ, միջազգային պարտավորություններ է ստանձնել՝ ընդունելու համարժեք օրենսդրական ակտեր կաշառակերության դեմ արդյունավետ պայքար ծավալելու ուղղությամբ՝ դրանց համար սահմանելով համապատասխան քրեական պատիժներ: Դրա նպատակն է **թույլ չտալ, որպեսզի պաշտոնյայի անհամաչափ գործողության կամ անգործության արդյունքում խտրական իրավիճակ ստեղծվի մարդկանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հարցում: Սա ավելին է, քան պարզապես պաշտոնական դիրքի չարաշահումը, որովհետև դրա հետևանքը հանգեցնում է իրավական պետության հիմնարար սկզբունքների ձևախեղմանը՝ ոչ միայն պաշտոնյան չի առաջնորդվում իրավունքի գերակայության սկզբունքով, այլև մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության հարցում խտրական իրավիճակ է ստեղծում:**

2003թ. մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան և վավերացրել է 2004թ. հունիսի 8-ին: Նույն թվականի փետրվարի 17-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և դեկտեմբերի 8-ին վավերացրել է ԵԽ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: 2004թ. հունվարի 20-ին

[1] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշման հավելված. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31881

Հայաստանը անդամակցել է ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետությունների հատուկ խմբին՝ ԳՐԵԿՈ-ին, որն իրականացում է պարբերական գնահատումներ անդամ երկրների հակակոռուպցիոն միջոցառումների և կոնվենցիաների պահանջների կատարման նկատմամբ, իսկ այնուհետև ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիաները:

Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականից ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնված «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքում մշակված հանձնարարականների հիման վրա:[1]

Հայաստանի Հանրապետությունը 2005թ. մայիսի 19-ին ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԴԿ), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006թ., իսկ 2007թ. ապրիլի 7-ին Հայաստանի Հանրապետությունը միացել է կոնվենցիային: Կոռուպցիայի դեմ կոնվենցիան իրավապարտադիր համաձայնագիր է և այն ստորագրած պետությունների միջև սահմանում է կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, հետաքննման և պատժելիության չափանիշները և պահանջները: Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը,

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը,

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:[2]

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ:

Հայաստանի Հանրապետության երկրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների 2009-2012թթ. ծրագիրն ընդունվել են 2009թ. հոկտեմբերի 8-ի ՀՀ Կառավարության թիվ 1272-Ն որոշմամբ:[3] Հաշվի առնելով նախորդ

---

[1] Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը, 2015. Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Երևան 2016, ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան. https://www.moj.am/storage/uploads/001_Korupciayi_dem_Payqar_2015.pdf

[2] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա»՝ ընդունված 31.10.2003 https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021

[3] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշում, հավելված 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74415

հակակոռուպցիոն ծրագրերի արդյունքները՝ այս ծրագրի հիմնական նպատակն էր ՀՀ-ում կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը և կոռուպցիայի միջոցով հարցեր կարգավորելու մարդկանց վերաբերմունքի փոփոխությունը, երկրի կառավարման համակարգի կայունության ամրապնդումը, երկրում տնտեսական աճի ապահովումը և բարձրացումը: 2009-2012թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրերի շնորհիվ հնարավոր եղավ արձանագրել որոշ դրական տեղաշարժ:

ՀՀ երկրորդ հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների շրջանակներում տեղի են ունեցել օրենսդրական փոփոխություններ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենքներ մի շարք ոլորտներում: Այսպես, հանրային ծառայության ոլորտում 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը միտված էր կարգավորելու հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, աշխատանքի ընդունման և ազատման, պաշտոնի փոփոխության, վարքագծի և շահերի բախման ընդհանուր սկզբունքները:[1] Ինչպես նաև օրենքի ուժ է ստացել բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը և սկսել գործի դրվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման էլեկտրոնային համակարգը:[2] Կանոնակարգվել են ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի, շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների վերոնշյալ երկու ծրագրերի արդյունքներով և միջազգային ցուցանիշների համաձայն, կոռուպցիայի հաղթահարման առումով Հայաստանում վիճակը չի բարելավվել, ավելին՝ մնացել է բարձր և վերածվել համակարգային հիմնախնդրի:

2014թ. հոկտեմբերի 8-10-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի կողմից իրականացված Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի զեկույցում նշվել է, որ 2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը պատշաճորեն չի կատարվել և առաջարկվել է ապագայում ապահովել ռազմավարության «ակտիվորեն կատարումը»:[3] 2013 թվականին ՀՀ կառավարությունը կազմել է դրա իրականացման Գնահատման զեկույց, ըստ որի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունում և դրա իրականացման 2009-2012թթ. Միջոցառումների ծրագրում նշված նպատակները չեն իրականացվել»: Մոնիթորինգի զեկույցում դրական է ընդունվել ռազմավարության իրականացման բաց և քննադա-

---

[1] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 26.05.2011թ.,ուժի մեջ մտած 01.01.2012թ., ուժը կորցրած 20.11.2019թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832

[2] ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով. հաշվետվություններ http://cpcarmenia.am/hy/report/

[3] Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում, Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի երրորդ փուլի զեկույց: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց: Սույն զեկույցն ընդունվել է 2014թ. հոկտեմբերի 8-10-ը Փարիզի ՏՀԶԿ–ում տեղի ունեցած ՀԿՑ-ի հանդիպման ժամանակ: http://www.parliament.am/library/Korupcia/greko/8.pdf

տական գնահատումը, սակայն եզրահանգում է արվել այն մասին, որ 66 տոկոս իրականացման աստիճանը չի համարվել «ակտիվորեն կատարում» և չի համապատասխանել առաջարկությանը:

2015թ. փետրվարի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունել է 165-Ն որոշումը՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու և փորձագիտական խումբ ձևավորելու մասին, և սահմանվել են երկու մարմինների և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգերը: Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ազգային օրենսդրության շոշափելի փոփոխությունը ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի թիվ 150-Ն որոշումն էր, որով փոփոխություն և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն և 1819-Ն որոշումներում՝ ընդլայնելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի բովանդակությունը և հրապարակման ենթակա տվյալների շրջանակը: Մասնավորապես, այս փոփոխությունների ուժով բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրան փոխկապակցված անձի հայտարարագրերի տվյալները՝ կապված անշարժ գույքի, շարժական գույքի, արժեթղթերի, փոխառությունների հետ, ենթակա են հրապարակման՝ անկախ ձեռքբերման կամ օտարման արժեքից՝ ի տարբերություն նախկինում ամրագրված որոշակի շեմերի:

ՀՀ երրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրն ընդունվել են 2015թ. սեպտեմբերի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 1141-Ն որոշմամբ:[1] Հակակոռուպցիոն երրորդ ռազմավարության գլխավոր նպատակն էր կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելը, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը: ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի երրորդ ռազմավարության կարևորագույն խնդիրն էր հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելումը՝ կոռուպցիոն վարքագծի դեպքում առավել խիստ միջոցների կիրառումը, կոռուպցիոն վարքագծի դրսևորումների արդյունավետ քննությունը և այլն:

ՀՀ երրորդ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների մասին խոսելիս, որպես դրական քայլեր, անհրաժեշտ է առանձնացնել ստորև նշվածները[2].

---

[1] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 1141-Ն որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=100900

[2] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 1141-Ն որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=100900

1) 2017թ. հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն Հայաստանում 2019թ. ստեղծվեց անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին:

2) 2018թ. մարտի 23-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը, որով ամբողջությամբ վերանայվել է հանրային ծառայության համակարգը, բարեփոխվել են կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն տարրեր հանդիսացող հայտարարագրման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, բարեվարքության կառուցակարգերը:

3) 2018թ. մարտի 23-ին ընդունվել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը, որի պահանջների գործնական իրացման արդյունքում քաղաքացիական ծառայության համակարգը դարձել է համեմատաբար ավելի արդյունավետ և մրցունակ:

4) Նորմատիվ իրավական ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով 2016թ. սեպտեմբերի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. մարտի 25-ի թիվ 296-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության 1134-Ն որոշումը (ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ), որով ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք: Միաժամանակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համահունչ՝ ՀՀ Կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. մարտի 25-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1146-Ն որոշմամբ սահմանվել է հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման նոր կարգը՝ հիմքում ունենալով հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները:

5) Պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովման, վարչարարության պարզեցման նպատակով ներդրվել են կամ ներդրման փուլում են էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) մի շարք առանձին գործիքներ (օրինակ՝ e-request.am, e-hotline.am, e-license.am և այլն):

6) 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթը, որի արդյունքում քրեականացվել է ապօրինի հարստացումը և սահմանվել է քննչական ենթակայությունը:

7) 2017թ. հունիսի 9-ին ընդունված «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներով

քրեական և վարչական պատասխանատվություն է սահմանվել, համապատասխանաբար, հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու և հայտարարագրերը սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

8) 2017թ. հունիսի 9-ին ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական փաթեթի շրջանակներում սահմանվել են ազդարարների պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև գործուն կառուցակարգերի ներդրման դրույթներ (անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ)՝ նպատակ հետապնդելով նպաստել հանրության մեջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը, կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

9) Վերը նշված օրենքի կենսագործումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ Կառավարության 2018թ. մարտի 15-ի N 272-Ն և 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 439-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատվել են «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը» և «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը»:

Կոռուպցիայի դեմ պայքարի երրորդ ռազմավարության և գործողությունների 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի գլխավոր ներդրումը և նպատակը եղել է կոռուպցիայի դեմ պայքարը ավելի համախմբված և մասշտաբային դարձնելը, որի համար կատարվել են նոր օրենսդրական փոփոխություններ, ընդունել ստեղծված իրադրության համապատասխան որոշումներ և ստեղծել համապատասխան ժամանակակից համակարգ:

ՀՀ չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիրն ընդունվել են 2015թ. սեպտեմբերի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 1141-Ն որոշման հավելված 1-ով:[1] Ռազմավարության հիմնական նպատակն էր կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումը, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և

[1] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ Կառավարության թիվ 1332-Ն որոշում, հավելված 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876

տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը: Ռազմավարությունում գործողությունները բաժանված են երեք մեծ խմբերում, բովանդակային առումով ընդգրկում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուները՝ կոռուպցիայի կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիոն գործերի քննություն (պատժի անխուսափելիություն):

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը կոռուպցիայի կանխարգելումն իրականացնում է հետևյալ ենթաուղղություններով.

1. Վարչական կոռուպցիայի հաղթահարում,
2. Հանրային կառավարման համակարգում բարեվարքության ամրապնդում,
3. Հայտարարագրում,
4. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատում և մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացում:

2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը (ընդունված 05.05.2021թ.), որտեղ սահմանվում է կոռուպցիոն հանցագործությունների ընդլայնված ցանկը,[1] որոնց համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սովորաբար հակակոռուպցիոն մարմինների գործունեությունն ունենում է երեք ուղղություն՝ քննչական, կանխարգելիչ և կրթական, որոնցից յուրաքանչյուրն ունի անգնահատելի նշանակություն կոռուպցիայի դեմ պայքարում: Անդրադառնանք ՀՀ-ում գործող հակակոռուպցիոն մարմինների գործունեությանը:

2017թ. հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2019թ. նոյեմբերի 20-ին ուժի մեջ է մտել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, անկախության երաշխիքները, գործառույթներն ու լիազորությունները, անդամներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության և վարույթների անցկացման հետ կապված հարաբերությունները:[2] 2019-2021թթ. ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությունների շրջանակը և գործիքակազմը: Հանձնաժողովին օրենսդրական հիմքով հասանելիություն է տրվել պետական տվյալների շտեմարաններին, ինչպես նաև ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններին, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին, վարկային տեղեկատվությանը:

2021թ. մարտի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը, որն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ.

---

[1] ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 05.05.2021թ, ուժի մեջ մտած 01.07.2022թ.https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080

[2] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 09.06.2017թ., ուժի մեջ մտած 20.11.2019թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114355

հոկտեմբերի 23-ին:[1] Հակակոռուպցիոն կոմիտեն կոռուպցիոն հանցագործությունների գործերով մասնագիտացված և անկախության երաշխիքներ ունեցող քննչական մարմին է, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն: 2021թ. հոկտեմբերի 23-ից ՀՀ ողջ տարածքում կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության կատարումն ամբողջությամբ վերապահվել է Հակակոռուպցիոն կոմիտեին:

2021թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 280 քրեական գործ: Հիշյալ քրեական գործերից ավարտվել են 48-ը կամ 17,1 տոկոսը, որից 9 քրեական գործ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2021թ. ընթացքում ծավալուն աշխատանքներ են իրականացվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վերջնական ձևավորման ուղղությամբ, որոնց մի մասը շարունակվել է նաև 2022թ. ընթացքում. ընդունվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համալրման նպատակով մրցույթների անցկացման գործընթացը կարգավորող իրավական ակտերը, հաստատվել են համապատասխան կարգերը, ձևավորվել է մրցութային հանձնաժողովը և հայտարարվել է մրցույթ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համալրման նպատակով:[2]

Դեռևս 2019թ. Գլխավոր դատախազի 2019թ. սեպտեմբերի 24-ի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007թ. հունիսի 29-ի թիվ 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 39 հրամանով ստեղծվել էր Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:[3] Այնուհետև, Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացման նպատակով, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական փաթեթի շրջանակներում Ազգային ժողովի կողմից 2021թ. ապրիլի 14-ին ընդունվել և նույն թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ է մտել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվել է Գլխավոր դատախազության կազմում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պաշտոնների նախատեսում, ըստ որի պաշտոններում կարող են նշանակվել բացառապես օրենքով

---

[1] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 24.03.2021թ., ուժի մեջ մտած 23.10.2021թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799

[2] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե. հաղորդում հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին. https://www.anticorruption.am/hy/pages/show/report

[3] Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2021 թվականի զեկույց, Երևան, 2022, https://www.moj.am/storage/uploads/22AC_annual_REPORT_FULL_2021_LAST.pdf

սահմանված կարգով բարեվարքության ուսումնասիրություն անցած անձինք: Բացի այդ, բարեվարքության ստուգման պահանջ է սահմանվել նաև ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված դատախազների, գլխավոր դատախազի, նրա տեղակալների ընտրության գործընթացի շրջանակում: Նշված օրենսդրական փոփոխությունների հիման վրա Գլխավոր դատախազության կազմում 2021թ. նոյեմբերի 22-ին ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը:

2021թ. ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ է մտել Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը, համաձայն որոնց՝ Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն 13 հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ, որոնց թեկնածուների բարեվարքությունը ստուգվելու է: Համաձայն նշված կարգավորումների՝ մեկնարկել է Հակակոռուպցիոն դատարանի ստեղծման գործընթացը, որի շրջանակներում Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքությունը ստուգվել է, դատավորների թեկնածուների ցուցակի համալրման գործընթացը կազմակերպվել է սահմանված կարգով, ներգրավվել է նաև միջազգային փորձագետ: 2022թ. երկրորդ կիսամյակից գործում է Հակակոռուպցիոն դատարանը:

2021թ. մշակվել և 2022թ. փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն ոլորտային մասնագիտացման ապահովմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որի հիման վրա Վճռաբեկ պալատում, ի թիվս այլնի, նախատեսվում է ստեղծել Հակակոռուպցիոն պալատ, որը քննելու է կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը:

Վերլուծելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիրը՝ հարկ է նշել, որ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարում դեռևս կան մի շարք խնդիրներ, որոնք կապված են ինչպես կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման, այնպես էլ հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն մեխանիզմների մշակման հետ և ուղղված են արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության կիրարկմանը: Հետևաբար, այն բացթողումները, որոնք դեռևս համակարգային բնույթ են կրում, խոչընդոտում են նաև հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

Այսպիսով, կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու տեսանկյունից կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները արդի մարտահրավերներին և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, կոռուպցիոն

ռիսկերի կրճատմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրումը և դրանց գործնականում ապահովումը:

Գիտական նորույթը: Ուսումնասիրելով ՀՀ-ում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և դրանց կարգավորման հիմքերը՝ ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետ իրականացմանը և կոռուպցիայի հաղթահարմանը:

Եզրակացություն: Կոռուպցիայի դեմ պայքարը դժվարին գործընթաց է և չի կարող իրականացվել առանց կարճաժամկետ բարեփոխումների ծրագրի, որի հիմքում պետք է դրված լինեն հետևյալ նախապայմանները.

- իշխանությունների կամքը և շահագրգռվածությունը կոռուպցիայի դեմ պայքարելու գործում (քաղաքական կամքի դրսևորում),
- կոռումպացված գործողությունների նկատմամբ պահանջարկի նվազեցումը՝ հարկային արտոնությունների, առանձին թույլտվություն պահանջող գործունեության տեսակների նվազեցման, նորմատիվային-կարգավորող և օրենսդրական ակտերում տարամեկնաբանություններ ու սողանցքներ պարունակող նորմերի վերացման միջոցով, ինչը կառավարման և դատահիրավական համակարգերը կդարձնի առավելագույնս թափանցիկ և հաշվետվողական,
- կոռումպացված գործողությունների առաջարկի կրճատում՝ ինչպես հանրային հատվածում, այնպես էլ տնտեսության մյուս ոլորտներում:

Կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոցն օրենքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի ապահովումն է: Գործող օրենսդրական դաշտի անհստակությունը, իրարամերժությունն ու հակասությունները խոցելի են դարձնում վարչական, իրավապահ ու դատական մարմինների կողմից դրանց կիրառման հնարավորությունները: Կոռուպցիային նպաստող հակասությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել օրենքների կատարելագործման գործընթացը՝ այն համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության պահանջներին, շեշտադրում կատարելով պետական իշխանության նման լիազորություններով օժտված մարմինների գործառույթները տարանջատելու և օրենքի (հատկապես տնտեսական ոլորտին վերաբերող) դրույթների երկակի մեկնաբանության հնարավորությունը բացառելու վրա: Օրենքների կիրառման գործընթացը պահանջում է օրենքի մշակման կուլտուրայի, կենսագործման մեխանիզմների բարելավում:

Արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարություն իրականացնելու տեսանկյունից կարևոր է զարգացնել հակակոռուպցիոն մարմինների գործունեության կրթական ուղղությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը, փոխել պետության հանդեպ հասարակության վերաբերմունքը: Հասարակության մեջ կոռուպցիան որպես բացասական երևույթ արմատավորելու և կոռուպցիոն երևույթները մերժելու համար տեղեկատվության փոխանցման տարբեր հարթակներով հասարակությանն իրազեկել կոռուպցիոն երևույթների բացասական հետևանքների մասին, հակակոռուպցիոն պայքարի միջոցառումների մասին ներկայացնել նաև կրթական հաստատություններում՝ դասավանդվող առարկաների ցանկում ներառելով «Կոռուպցիայի կանխարգե-

լում և հաղթահարում» առարկան՝ նպատակ ունենալով դպրոցից սկսած հասարակության մեջ արմատավորել կոռուպցիան որպես պարսավելի երևույթ՝ ընդգծելով կոռուպցիոն երևույթների բացասական հետևանքները:

Քանի որ հակակոռուպցիոն պայքարը կարող է հանգեցնել կոռուպցիայի նոր, առավել կատարելագործված և ստվերային ձևերի առաջացմանը, ուստի հակակոռուպցիոն ծրագրերը պետք է ռիսկերի առաջանցիկ վերլուծություն ներկայացնեն հակակոռուպցիոն պայքարի արդյունքում ձևավորվելիք նոր իրավիճակի վերաբերյալ և, կանխատեսելով հնարավոր նոր կոռուպցիոն դրսևորումները, մշակվեն դրանց հաղթահարման ուղիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ի՞նչ է կոռուպցիան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն. https://www.transparency.am/hy/what-is-corruption
2. Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը, 2015. Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Երևան 2016, ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան. https://www.moj.am/storage/uploads/001_Korupciayi_dem_Payqar_2015.pdf
3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 09.06.2017թ, ուժի մեջ մտած 20.11.2019թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114355
4. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում, Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի երրորդ փուլի զեկույց: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց. http://www.parliament.am/library/Korupcia/greko/8.pdf
5. Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2021 թվականի զեկույց, Երևան, 2022 https://www.moj.am/storage/uploads/22AC_annual_REPORT_FULL_2021_LAST.pdf
6. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 24.03.2021թ., ուժի մեջ մտած 23.10.2021թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799
7. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշման հավելված. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31881
8. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշում, հավելված 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74415
9. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 1141-Ն որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=100900

10. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ Կառավարության թիվ 1332-Ն որոշում, հավելված 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876
11. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 26.05.2011թ., ուժի մեջ մտած 01.01.2012թ., ուժը կորցրած 20.11.2019թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832
12. ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով. http://cpcarmenia.am/
13. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե. հաղորդում հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին. https://www.anticorruption.am/hy/pages/show/report
14. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2021թ. մայիսի 5-ին, ուժի մեջ մտած 2022թ. հուլիսի 1-ին. https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
15. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա»՝ ընդունված 31.10.2003թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021
16. Andvig J. The economics of corruption: A survey // Studi economici. 1991. Vol. 46. N 43. P. 57-94.
17. Cadot O. Corruption as gamble // Journal of public economics. 1987. N 3. P. 223-244.
18. Leff N. Economic development through bureaucratic corruption // American behavioural scientist. 1964. N 2. P. 8-14.
19. Sah R. Persistence and pervasiveness of corruption / The World Bank (Conf. on political economy: theory and policy implications, 17-19 June 1987). Wash., 1987.
20. Shackleton J. Corruption: An essay in economic analysis // Political quart. 1978. Vol. 49. N 1. P. 25-34.
21. https://www.e-draft.am/en/projects/129/justification

References

1. I՞nch e' kor'owpcian, «T'ransp'arensi Int'erneshnl» hakakor'owpcion kentron. https://www.transparency.am/hy/what-is-corruption
2. Kor'owpcion iravitwaky' Hayastanowm & dra dem payqary', 2015. T'ransp'arensi Int'erneshnl, Er&an 2016, THZK Stambowli hakakor'owpcion gorc'oghowt'yownneri plan. https://www.moj.am/storage/uploads/001_Korupciayi_dem_Payqar_2015.pdf
3. «Kor'owpciayi kanxargelman hand'najhoghovi masin» HH o'renq՝ y'ndownvac' 09.06.2017t'. , owjhi mej mtac' 20.11.2019t'.https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114355
4. Hakakor'owpcion barep'oxowmner Hayastanowm, Stambowlyan hakakor'owpcion gorc'oghowt'yownneri c'ragri monit'oringi errord p'owli zekowyc: Tntesakan hama-gorc'akcowt'yan & zargacman kazmakerpowt'yown, Arevelyan Evropayi & Kentro-nakan Asiayi hakakor'owpcion canc. http://www.parliament.am/library/Korupcia/greko/8.pdf

5. Hakakor'owpcion r'azmavarowt'yan monit'oringi & gnahatman 2021 t'vakani zekowyc, Er&an, 2022 https://www.moj.am/storage/uploads/22AC_annual_REPORT_FULL_2021_LAST.pdf
6. «Hakakor'owpcion komitei masin» HH o'renq` y'ndownvac' 24.03.2021t'., owjhi mej mtac' 23.10.2021t'. https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799
7. Hayastani Hanrapetowt'yan hakakor'owpcion r'azmavarowt'yan & dra irakanacman mijocar'owmneri c'ragir, HH kar'avarowt'yan 2003 t'vakani noyemberi 6-i t'iv 1522-N oroshman havelvac'. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31881
8. Hayastani Hanrapetowt'yan hakakor'owpcion r'azmavarowt'yowny' & dra irakanac-man 2009-2012t't'. mijocar'owmneri c'ragiry' hastatelow masin HH kar'avarowt'yan 2009t'. hoktemberi 8-i t'iv 1272-N oroshowm, havelvac' 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74415
9. Hayastani Hanrapetowt'yan hakakor'owpcion r'azmavarowt'yowny' & dra irakanacman 2015-2018t't'. mijocar'owmneri c'ragiry' hastatelow masin HH kar'avarowt'yan 2015t'. septemberi 25-i HH Kar'avarowt'yan t'iv 1141-N oroshowm. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=100900
10. Hayastani Hanrapetowt'yan hakakor'owpcion r'azmavarowt'yowny' & dra irakanac-man 2019-2022t't'. mijocar'owmneri c'ragiry' hastatelow masin HH kar'avarowt'yan 2019t'. hoktemberi 3-i HH Kar'avarowt'yan t'iv 1332-N oroshowm, havelvac' 1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876
11. «Hanrayin c'ar'ayowt'yan masin» HH o'renq` y'ndownvac' 26.05.2011t'., owjhi mej mtac' 01.01.2012t'., owjhy' korcrac' 20.11.2019t'. https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832
12. HH kor'owpciayi kanxargelman hand'najhoghov. http://cpcarmenia.am
13. HH hakakor'owpcion komite. haghordowm hakakor'owpcion komitei tarekan gorc'owneowt'yan masin. https://www.anticorruption.am/hy/pages/show/report
14. HH qreakan o'rensgirq, y'ndownvac' 2021t'. mayisi 5-in, owjhi mej mtac' 2022t'. howlisi 1-in. https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
15. MAK-i «Kor'owpciayi dem konvencia»` y'ndownvac' 31.10.2003t'. https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021
16. Andvig J. The economics of corruption: A survey // Studi economici. 1991. Vol. 46. N 43. P. 57-94;
17. Cadot O. Corruption as gamble // Journal of public economics. 1987. N 3. P. 223 - 244;
18. Leff N. Economic development through bureaucratic corruption // American behavioural scientist. 1964. N 2. P. 8-14;
19. Sah R. Persistence and pervasiveness of corruption / The World Bank (Conf. on political economy: theory and policy implications, 17-19 June 1987). Wash., 1987
20. Shackleton J. Corruption: An essay in economic analysis // Political quart. 1978. Vol. 49. N 1. P. 25-34
21. https://www.e-draft.am/en/projects/129/justification

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱԿԱ-ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Էլյանորա Նորայրի Մաթևոսյան
Մարո Հայկազի Դեթլոֆֆ

Համառոտագիր: Կոռուպցիան աշխարհի երկրների զարգացման և առաջընթացի լրջագույն խնդիրներից մեկն է, որը բացասական ազդեցություն ունի հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն: Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ են նվիրված կոռուպցիայի խնդիրներին, ընդունվել են միջազգային պայմանագրեր՝ ուղղված հակակոռուպցիոն օրենսդրության մշակմանը, մշակվել են հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր և ռազմավարություն: Այս համատեքստում էլ հատկապես կարևորվում է ՀՀ-ում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց կարգավորման հիմքերի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և ռազմավարությունները, դրանց կարգավորման օրենսդրական հիմքերը: **Հետազոտության խնդիրն է**՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հակակոռուպցիոն ռազմավարությունների ուսումնասիրության հիման առաջարկել հակակոռուպցիոն պայքարի այլընտրանքային մոտեցումներ:

Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու գլխավոր գրավականներից է արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը, բարեվարքության ամրապնդումը, կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովումը: Կոռուպցիայի կանխարգելման, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առանցքային նշանակություն ունի օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը, կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացումը:

Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու տեսանկյունից կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները արդի մարտահրավերներին և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, կոռուպցիոն ռիսկերի զրոյացմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրումը և դրանց գործնականում ապահովումը:

Հոդվածի գիտական նորույթը. ուսումնասիրելով ՀՀ-ում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և դրանց կարգավորման հիմքերը՝ ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետ իրականացմանը և կոռուպցիայի հաղթահարմանը:

Բանալի բառեր. կոռուպցիա, հակակոռուպցիոն միջոցառումներ, կոռուպցիայի դեմ պայքար, հակակոռուպցիոն ռազմավարություն, օրենք, կարգավորման հիմքեր, կոռումպացված գործողություններ, կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիայի հաղթահարում

АНТИКОРРУПЦИОННЫЕ МЕРЫ, ОСУЩЕСТВЛЯЕМЫЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ОСНОВЫ РЕГУЛИРОВАНИЯ

Элянора Норайровна Матевосян
Маро Айказовна Детлофф

Аннотация. Коррупция - одна из серьезнейших проблем развития и прогресса стран мира, оказывающая негативное влияние на различные сферы общественных отношений: экономическую, политическую, социальную, культурную и др. В Республике Армения проблемам коррупции посвящено множество научных исследований, приняты международные соглашения, направленные на развитие антикоррупционного законодательства, разработаны программы и стратегии антикоррупционных мер. В этом контексте изучение реализуемых в РА антикоррупционных мер и основ их регулирования приобретает особое значение, что определяет **актуальность темы исследования**.

Цель исследования - изучить антикоррупционные меры и стратегии, реализуемые в Республике Армения, законодательные основы их регулирования. **Задачей исследования** является предложение альтернативных подходов к борьбе с коррупцией на основе изучения антикоррупционных стратегий, применяемых в Республике Армения.

Одним из главных залогов успеха в борьбе с коррупцией являются: наличие эффективной институциональной системы, укрепление нравственного поведения, предоставление необходимых инструментов для борьбы с коррупцией. В целях предотвращения коррупции и повышения эффективности системы государственного управления ключевое значение имеет формирование класса законопослушных и добросовестных государственных служащих и выполнение образовательно-превентивных функций в борьбе с коррупцией.

Для достижения успеха в борьбе с коррупцией важно адаптировать антикоррупционные меры к современным вызовам и международным стандартам, а также внедрить эффективные структуры, направленные на обнуление коррупционных рисков и обеспечить их на практике.

Научная новизна статьи заключается в том, что после изучения реализуемых в РА антикоррупционных мер и основ их регулирования были представлены рекомендации по эффективной реализации антикоррупционных мероприятий и преодолению коррупции.

Ключевые слова: коррупция, антикоррупционные меры, борьба с коррупцией, антикоррупционная стратегия, закон, основы регулирования, коррупционные действия, предотвращение коррупции, преодоление коррупции.

ANTI-CORRUPTION MEASURES AND THEIR REGULATORY BASIS IN THE REPUBLIC OF ARMENIA

Elyanora Norair Matevosyan
Maro Haykaz Detloff

Abstract. Corruption is one of the most serious issues of the development and progress of the countries, which has a negative impact on various spheres of public relations: economic, political, social, cultural, etc. In the Republic of Armenia, many scientific studies have been devoted to the problem of corruption, international agreements aimed at the development of anti-corruption legislation have been adopted, programs and strategies of anti-corruption measures have been developed. In this context, the study of anti-corruption measures implemented in RA and the basis of their regulation is particularly important, which determines the **relevance of the research topic.**

The purpose of the research is to study the anti-corruption measures and strategies implemented in the Republic of Armenia, the legislative bases of their regulation. **The objective of the research** is to propose alternative approaches to the anti-corruption fight based on the study of the anti-corruption strategies used in the Republic of Armenia.

One of the main keys to success in the fight against corruption is the existence of an effective institutional system, strengthening of moral, behavioral aspects, provision of necessary tools for the fight against corruption. In order to prevent corruption and increase the efficiency of the state administration system, the formation of a class of law abiding and conscientious public servants, the implementation of educational and preventive functions in the fight against corruption is of key importance.

In order to succeed in the fight against corruption, it is important to adapt anti-corruption measures to modern challenges and international standards, to introduce effective structures aimed at extinction of corruption risks and to ensure their implementation in practice.

The scientific novelty of the article lies in the fact that after studying the anti-corruption measures and their regulatory bases in RA, recommendations for the effective implementation of anti-corruption measures and overcoming corruption were presented.

Keywords: corruption, anti-corruption measures, fights against corruption, anti-corruption strategy, law, regulatory basis, corrupt activities, prevention of corruption, overcoming corruption.